

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԱԼՈՅԱՆ ԼՈՒՍՅԱ ԽԱՉԱՏՈՒԻՐԻ

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Ը.00.02- Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և
կառավարում| մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

ՄԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2014

Ատենախոսության թեման հաստատվել է Կառավարման և տնտեսական քարեփոխումների ինստիտուտում

Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Սամսոն Աշոտի Դավոյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Մ.Վ. Միքայելյան
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Հ.Վ. Ջաքյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2014 թվականի նոյեմբերի 28-ին ժամը 13:30-ին Երևանի պետական համալսարանում գործող տնտեսագիտության թիվ 015 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0009, Երևան, Աբովյան 52

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014 թվականի հոկտեմբերի 27-ին:

015 Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար
տեխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝

Ա. Հ. Առաքելյան

ՄՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Պետական պարտքը պետության տնտեսական ռազմավարության իրագործմանը նպաստող, բյուջետային կարգավորման կարևորագույն գործիքներից մեկն է: Պետական փոխառությունները բյուջետային պակասուրդի ֆինանսավորման հզոր ոչ գնաձային աղբյուր են: Բացի այդ, պետությունը, ստանձնելով պարտքային պարտավորություններ, հնարավորություն ունի լրացուցիչ ռեսուրսներ ներգրավել խոշոր ներդրումային նախագծերի իրականացման և հարկային բեռի ռացիոնալ բաշխման համար:

Մյուս կողմից՝ պետական փոխառությունների ներգրավումը կարող է ունենալ նաև բացասական հետևանքներ: Մասնավորապես, պետական պարտքի սպասարկման համար ծախսերի կատարման անհրաժեշտությունը պետությանը հարկադրում է տնտեսական և սոցիալական զարգացման կարիքների բավարարման փոխարեն նշանակալի բյուջետային միջոցներ հատկացնել այդ նպատակի իրագործմանը, ինչպես նաև՝ ապագա սերունդների վրա ավելցուկային պարտքային բեռ է փոխանցում: Պետական պարտքի կառուցվածքի ձևավորման խնդիրների հանդեպ պատշաճ ուշադրության բացակայությունը բարձրացնում է պետության վարկատուներից ֆինանսական ու նաև քաղաքական կախվածության մեջ հայտնվելու հավանականությունը:

Պետական պարտքի կառավարման հիմնախնդիրները առանձնակի կարևորություն ձեռք բերեցին 2007-2009թթ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի համատեքստում, երբ առանձին երկրներում պետական պարտքի կառավարման իրավիճակային ու կարճաժամկետ հատվածում առավելագույն արդյունքի ստացման նպատակադրումների վրա առուցված քաղաքականությունը այդ երկրներին ֆինանսական համակարգի կազմալուծման ու պետության դեֆոլտի իրական վտանգի առաջ կանգնեցրեց:

Պետական պարտքի արդյունավետ կառավարումը օրակարգային է նաև Հայաստանի Հանրապետության համար: Ընդհանուր առմամբ, անկախության առաջին տարիներին առկա օբյեկտիվ իրողությունների պայմաններում

պետական պարտքի անխուսափելի ավելացումը պարտքային լուրջ խնդիրների չհանգեցրեց, միջազգային ֆինանսավարկային կազմակերպություններից արտոնյալ պայմաններով վարկերի ու փոխառությունների ներգրավման ու նաև առաջանցիկ տեմպերով տնտեսական աճի շնորհիվ: Այնուհանդերձ, համաշխարհային ճգնաժամով պայմանավորված ֆինանսատնտեսական խնդիրների հաղթահարման նպատակով հանրապետության կառավարությունը հետճգնաժամային շրջանում հարկադրված եղավ էականորեն մեծացնել պարտքային պարտավորությունների ծավալը, ինչը պետական ֆինանսական համակարգի կայունության ապահովման խնդիրների լուծման համատեքստում նոր մարտահրավերներ է առաջադրում ու նաև երկրի ֆինանսատնտեսական համակարգի կատարելագործման ներուժային հնարավորությունների արդյունավետ օգտագործում պահանջում:

Այս առումով հանրապետության ֆինանսատնտեսական համակարգի հետագա զարգացման համար առանձնակի կարևորվում են պետական պարտքի կառավարման արդյունավետության բարձրացման ներուժային հնարավորությունների բացահայտումը և օգտագործումը, պարտքի կառավարման համակարգի կատարելագործումը, պարտքային պարտավորությունների փաթեթի օպտիմալացումը և այլն:

Վերջին ժամանակներս ՀՀ պետական պարտքի կառավարման հիմնահարցերը դարձել են բազմաթիվ տնտեսագիտական հետազոտությունների և ուսումնասիրությունների առարկա: Դրանով հանդերձ, սակայն, պետական պարտքի կառավարման կատարելագործման, պարտքի օպտիմալ կառավարման ընթացակարգի մշակման, պետական պարտքի և մակրոտնտեսական ցուցանիշների փոխկապվածության գնահատման և նմանատիպ շատ այլ հարցեր բավարար չափով հետազոտված չեն:

Ատենախոսությունը նվիրված է վերոնշյալ հիմնախնդիրների համակողմանի հետազոտմանը, դրանց լուծման ուղիների նախանշմանը, ինչով էլ պայմանավորված է հետազոտության թեմայի արդիականությունը և հրատապությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության հիմնական նպատակը պետական պարտքի կառավարման ոլորտում առկա լավագույն միջազգային փորձի արդյունքների հետազոտության հիման վրա ՀՀ-ում պետական պարտքի կառավարման հիմնախնդիրների բացահայտումն է, դրանց համակողմանի ուսումնասիրությունը և պետական պարտքի կառավարման արդյունավետության բարձրացմանը նպատակաուղղված տեսամեթոդական և գիտագործնական մոտեցումների մշակումը: Այս նպատակի իրագործման համար աշխատանքում առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- համակողմանիորեն հետազոտել պետական պարտքի կառավարման էությունը, հիմնական բնութագրիչները, տեղն ու դերը մակրոտնտեսական քաղաքականության համակարգում, վերլուծել պետական պարտքի կառավարման ոլորտում առկա լավագույն միջազգային փորձը,

- վերլուծել վերջին մեկուկես տասնամյակի ընթացքում ՀՀ պետական պարտքի և դրա հիմնական բաղադրիչների վարքագծի բնութագրերը,

- գնահատել հանրապետությունում տնտեսական աճի տեմպերի վրա պետական պարտքի և դրա առանձին բաղադրիչների ներգործությունը,

- հետազոտել ՀՀ-ում պետական պարտքի կառավարման ինստիտուցիոնալ միջավայրը,

- վերլուծել ՀՀ-ում պետական պարտքի կառավարման միջնաժամկետ նպատակները և դրանց իրագործման ֆինանսատնտեսական ռիսկերը,

- բացահայտել ու ներկայացնել ՀՀ-ում պետական պարտքի կառավարման կատարելագործման հիմնախնդիրները,

- մշակել պետական պարտքի օպտիմալ կառավարման ընթացակարգ:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը ՀՀ պետական պարտքն է և դրա կառավարման գործընթացների ամբողջությունը:

Հետազոտության առարկան ՀՀ պետական պարտքի կառավարման արդյունավետության բարձրացման հիմնախնդիրներն են:

Հետազոտության տեսամեթոդական հիմքը և տեղեկատվության ապահովումը:

Ատենախոսության համար տեսական հիմք են հանդիսացել պետական պարտքի կառավարման բնագավառում հայրենական և արտասահմանյան մի շարք գիտնականների կողմից կատարված հետազոտությունները, հրապարակումները, գիտավերլուծական նյութերը, ՀՀ օրենքները, ՀՀ կառավարության որոշումները, իրավական այլ ակտերը, այլ երկրների ու միջազգային կազմակերպությունների օրենսդրական և նորմատիվային փաստաթղթերը: Ատենախոսության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության, ՀՀ կառավարության, ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունների, Գենտրոնական բանկի, միջազգային ֆինանսավարկային կազմակերպությունների հրապարակած տվյալները, վիճակագրական, վերլուծական նյութերը, տնտեսագիտական ամսագրերը, այլ նյութեր: Հետազոտության ընթացքում կիրառվել են տնտեսավիճակագրական, տնտեսամաթեմատիկական, համեմատական, համակարգային, գրաֆիկական վերլուծությունների մեթոդները:

Հետազոտության հիմնական գիտական արդյունքները և նորույթը:

Ատենախոսությունում ստացված արդյունքներն ունեն տեսամեթոդական և կիրառական նշանակություն, որոնց գիտական նորույթը հետևյալն է՝

✓ Վերլուծվել և հիմնավորվել է պետական պարտքի ու դրա առանձին բաղադրիչների բացարձակ ու կառուցվածքային մակարդակները բնութագրող ցուցանիշների և ՀՆԱ մակարդակի ու դրա աճի տեմպի միջև գոյություն ունեցող ռեգրեսիոն կապը 1997-2013թթ. համար:

✓ Համաշխարհային բանկի կողմից մշակված մեթոդաբանության կիրառմամբ իրականացվել է ՀՀ-ում պետական պարտքի կառավարման համակարգի արդյունավետության գնահատում, բացահայտվել են առկա հիմնախնդիրները և ներկայացվել դրանց լուծմանն ուղղված առաջարկություններ, որոնք հիմնականում առնչվում են պետական պարտքի կառավարման ինստիտուցիոնալ միջավայրի կատարելագործմանը, պարտքի կառավարման ռազմավարության մշակման արդյունավետության բարձրացմանը, գործառնական ռիսկերի արդյունավետ կառավարմանը և այլն:

✓ Մշակվել են պետական պարտքի կառավարման ռազմավարական և մարտավարական մոդելներ, որոնց շրջանակներում բացահայտվել և հիմնավորվել է պետական պարտքի կառավարման օպտիմալ տարբերակի ընտրության հիմնախնդիրը: Այդ մոդելների կիրառման արդյունքն է պլանավորման յուրաքանչյուր ժամանակահատվածի համար որոշված փոխառության ֆինանսական գործիքների հավաքածուն: Ստացված լուծումների հիման վրա սահմանվել են այն պայմանները, որոնցից ելնելով՝ անհրաժեշտ է ձևավորել կոնկրետ փոխառության պայմանագրեր:

Ատենախոսության տեսական և կիրառական նշանակությունը:

Ատենախոսությունում ստացված գիտական արդյունքները, արված առաջարկություններն ու եզրակացությունները կարող են օգտագործվել ՀՀ պետական պարտքի կառավարման արդյունավետության բարձրացման ներուժային հնարավորությունների բացահայտման և կառավարման համարժեք գործիքների ու մեթոդների ընտրության ու կիրառման, ՀՀ պետական պարտքի կառավարման նպատակայնության բարձրացման, այդ ոլորտում առկա հիմնախնդիրների լուծման համար:

Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից՝ պետական պարտքի կառավարման ընթացակարգերի արդյունավետության բարձրացման խնդիրների լուծման ընթացքում:

Ատենախոսության տեսամեթոդական և գործնական որոշ արդյունքներ կարող են օգտակար լինել նաև պետական պարտքի կառավարման հիմնահարցերով զբաղվող մասնագետների ու հետազոտողների համար:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում: Ատենախոսության հիմնադրույթները հրատարակվել են գիտական յոթ հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության տեքստի ծավալը կազմում է 164 էջ, պարունակում է 8 աղյուսակ, 15 գծապատկեր:

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը և խնդիրները, առարկան և օբյեկտը, տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը, ձևակերպվել են աշխատանքի հիմնական արդյունքները և գիտական նորույթը, ստացված արդյունքների գիտական ու գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին` §Պետական պարտքը և դրա կառավարման տեսական և գործնական մոտեցումները! գլխում բացահայտվել է պետական պարտքի էությունը, ներկայացվել են հիմնական տեսությունները, դիտարկվել է պետական պարտքի կառավարման գործընթացը և հիմնական բնութագրիչները, իրականացվել է պետական պարտքի կառավարման միջազգային փորձի վերլուծություն:

Պետական պարտքի կառավարման համակարգը պետական պարտքի մեծության և կառուցվածքի արդյունավետ կարգավորմանն ուղղված բյուջետային, ֆինանսական, հաշվառումային, կազմակերպական և այլ ընթացակարգերի փոխկապվածություն է: Պարտքի կառավարման առանցքային նպատակ է հանդիսանում բյուջետային ռիսկի և պարտքի սպասարկման արժեքի նվազեցման միջև հավասարակշռության հաստատումը:

Պետական պարտքի կառավարման միջազգային փորձը վկայում է, որ բոլոր երկրների կառավարությունները հարկադրված են իրենց կողմից մշակվող և իրականացվող բազմաբնույթ ծրագրերի շրջանակներում ռազմավարական որոշումներ կայացնել պարտքի կառավարման նպատակների ընտրության, ռիսկի թույլատրելի մակարդակի ուղղությամբ: Այս հարցերի մեծամասնության հետ կապված առկա է մոտեցումների ավելի ու ավելի մեծ ընդհանրություն, մասնավորապես` պետական պարտքի կառավարման վատահելի փորձը կազմող, ինչպես նաև` արտաքին ֆինանսական ցնցումների տարածման ժամանակ երկրի տնտեսության խոցելիության նվազմանն օժանդակող մեթոդների առնչությամբ: Դրանց թվին են դասվում պարտքի կառավարման նպատակների հստակ սահմանումը, ռիսկերի համադրությամբ ծախսերի հաշվառումը, պարտքի կառավարման ու դրամավարկային կարգավորման կոորդինացիան և այլն:

Պետական պարտքի կառավարման միջազգային փորձի հետազոտությունը և հաջողված փորձի հետագա օգտագործումը ՀՀ պարտքային պարտավորությունների նվազեցման և երկրի ֆինանսական կայունության ապահովման ուղիներից մեկն է:


Ատենախոսության երկրորդ՝ §Պետական պարտքը և դրա կառավարումը ՀՀ-ում: գլխում իրականացվել է ՀՀ-ում պետական պարտքի և դրա կազմի ու կառուցվածքի փոփոխման միտումների, պարտքի բեռի վերլուծություն, ուսումնասիրվել է ՀՀ պետական պարտքի կառավարման ինստիտուցիոնալ միջավայրը, ինչպես նաև կատարվել է ՀՀ-ում տնտեսական աճի վրա պետական պարտքի ազդեցության գնահատման ռեգրեսիոն վերլուծություն: Դիտարկվել են նաև պետական պարտքի կառավարման միջնաժամկետ նպատակները և դրանց իրականացման ֆինանսատնտեսական ռիսկերը:

ՀՀ պետական պարտքը բնութագրող հիմնական ցուցանիշների վերլուծությունը բացահայտում է դրա հետևյալ կարևոր առանձնահատկությունները.

- պետական պարտքի կառուցվածքում գերակշռում է արտաքին պետական պարտքը, որի տեսակարար կշիռը չնայած վերջին տարիներին նվազել է, սակայն շարունակում է մնալ բարձր մակարդակի վրա (2013թ.-ին շուրջ 85%),

- ՀՀ ներքին պարտքը 2013թ. տարեվերջին կազմել է 277.7մլրդ դրամ, ընդ որում՝ 1997թ. համեմատ այս ցուցանիշը աճել է 9.2 անգամ. իսկ ներքին պարտքի տեսակարար կշիռը պետական պարտքի կառուցվածքում նույն ժամանակահատվածում 8.3%-ից աճել է մինչև 14.9%,


- պարտքի բեռը բնութագրող ցուցանիշների գծով հետճգնաժամային հատվածում որոշակի վատթարացում է արձանագրվել, սակայն դրանով հանդերձ՝ Հայաստանը շարունակում է համարվել հիմնականում պարտքի նվազ բեռ ունեցող երկիր: Գծապատկեր 1-ում ներկայացված է արտաքին պետական պարտքի ԶՆԱ/ՀՆԱ և արտաքին պետական պարտքի ԶՆԱ/արտահանում ցուցանիշների դինամիկան 1999-2012թթ.:



Գծապատկեր 1. Արտաքին պետական պարտքի ԶՆԱ հարաբերական ցուցանիշները, տոկոսներով¹

Արտաքին պարտքի բեռի գնահատման մյուս ցուցանիշները ևս, չնայած հետձգնաժամային շրջանում որոշակի աճին (տես՝ գծապատկեր 2), շարունակում են մնալ ստորին միջակայքում, և դրանց հիման վրա ՀՀ-ն դիտարկվում է որպես պարտքի ցածր բեռ ունեցող երկիր:

Աշխատանքում մեր կողմից իրականացվել է վերլուծություն, որի նպատակը պետական պարտքի ու դրա առանձին բաղադրիչների բացարձակ և կառուցվածքային մակարդակները բնութագրող ցուցանիշների և տնտեսության զարգացման հիմնական բնութագրիչ հանդիսացող ՀՆԱ մակարդակի ու դրա աճի տեմպի միջև գոյություն ունեցող ռեգրեսիոն կապի բացահայտումն է և գնահատումը:



Գծապատկեր 2. ՀՀ արտաքին պետական պարտքի սպասարկման բեռը²

¹ Աղբյուրը՝ ՏՀայաստանի Հանրապետության պետական պարտքը՝ տարեկան հաշվետվությունները, 2004-2013թթ., www.minfin.am:

Ռեգրեսիայի հավասարումների պարամետրերի գնահատման արդյունքները ներկայացված են աղյուսակում 1-ում.

Աղյուսակ 1³

Պետական պարտքի տարրեր բնութագրիչներից ՀՆԱ կախվածության ռեգրեսիոն գնահատման արդյունքները

Տող	Անկախ փոփոխականը	Ռեգրեսիայի գործակիցը		Ազատ անդամը		R ²	F
		Արժեքը	t-վիճ.	Արժեքը	t-վիճ.		
Կայսյալ փոփոխական - ՀՆԱ							
1	Պետական պարտք, մլրդ դրամ	1.89	5.1	768.9	2.1	0.61	25.7
2	Արտաքին պարտք, մլն ԱՄՆ դոլար	0.894	6.9	769.3	2.8	0.74	47.3
3	Արտաքին պարտքի կառուցվածքում կառավարության պարտքի տեսակարար կշիռը, տոկոս	192.3	6.9	-13184	-5.8	0.74	46.9
4	Միջազգային կազմակերպությունների վարկեր և փոխառություններ, մլն դոլար	1.45	8.4	432.5	1.7	0.82	70.4
5	Արտաքին պարտքի սպասարկում/արտահանում, տոկոս	-166.2	-3.3	3737.6	8.3	0.44	11.0
6	Արտաքին պարտքի տոկոսավճար/արտահանում, տոկոս	-478.7	-2.1	3389.4	6.5	0.21	4.4
7	Ներքին պետական պարտք/արտաքին պետական պարտք	224.9	8.6	-319.2	-0.9	0.82	74.3
8	Պետական պարտատուների ծավալը, մլրդ դրամ	12.73	7.0	1163.2	5.1	0.75	48.3

² Աղբյուրը՝ ՏՀայաստանի Հանրապետության պետական պարտքը՝ տարեկան հաշվետվությունները, 2004-2013թթ., www.minfin.am:

³ Աղբյուրը՝ հեղինակի նահատումները:

Տող	Անկախ փոփոխականը	Ռեգրեսիայի գործակիցը		Ազատ անդամը		R ²	F
		Արժեքը	t-վիճ.	Արժեքը	t-վիճ.		
9	Պետական կարճաժամկետ պարտատոմսեր/ պետական պարտատոմսեր	-36.7	-5.6	3764.6	12.3	0.65	30.8
10	Պետական պարտատոմսերի ժամկետայնությունը, օր	1.78	20.4	748.4	7.7	0.96	414.9
11	Պետական պարտատոմսերի եկամտաբերությունը, տոկոս	-50.2	-3.4	3325.7	9.1	0.40	11.3
12	Ներքին պարտքի տոկոսավճարներ/պետական բյուջեի եկամուտներ	-480.2	-3.1	3638.4	7.7	0.35	9.7
Կախյալ փոփոխական – ՀՆԱ ֆիզիկական ծավալի հինգերսը նախորդ տարվա համեմատ							
13	Կառուցվածքային հնդեքսն ըստ արտաքին պարտքի վարկատուների	-0.53	-2.2	110.5	51.4	0.21	4.99
14	Կառուցվածքային հնդեքսն ըստ արտաքին պարտքի արտոնյալության	-0.62	-4.1	110.9	72.2	0.51	16.4

Ատենախոսության երրորդ՝ §22 պետական պարտքի կառավարման արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները և դրանց լուծման տեսամեթոդական ու գիտագործնական մոտեցումները՝ գլխում իրականացվել է ՀՀ պետական պարտքի կառավարման կատարելագործման հիմնախնդիրների վերլուծություն: Համաշխարհային բանկի կողմից մշակված Պարտքի կառավարման գնահատման ցուցանիշների համակարգի կիրառմամբ բացահայտվել են ՀՀ պետական պարտքի կառավարման արդյունավետության բարձրացման առանցքային հիմնախնդիրները: Աշխատանքի այս գլխում ներկայացվել է նաև պետական պարտքի կառավարման արդյունավետության ապահովման ընթացակարգ, որը հիմնված է պետական պարտքի կառավարման ռազմավարական և օպերատիվ մակարդակների մոդելների օգտագործման վրա:

Այսպիսով՝ Համաշխարհային բանկի կողմից մշակված վերոնշյալ պարտքի կառավարման գնահատման ցուցանիշների համակարգը ներառում է վեց

ենթահամակարգերում ամփոփված պարտքի կառավարման արդյունավետության 15 ցուցանիշներ:

Այդ ցուցանիշների համակարգի հիման վրա մեր կողմից փորձ է արվել գնահատել ՀՀ-ում պետական պարտքի կառավարման արդյունավետությունը, բացահայտել առկա խնդիրները և ներկայացնել դրանց լուծմանն ուղղված առաջարկություններ: Վերլուծությունները ցույց են տվել, որ պարտքի կառավարման իրավական ու կազմակերպական հիմնադրույթների և ռազմավարության մշակման ու իրագործման շրջանակներում կան բազմաթիվ թերություններ ու հիմնախնդիրներ, որոնց վերացումը կարևոր դերակատարություն կունենա պետական պարտքի կառավարման արդյունավետության բարձրացման գործում: Այդ հիմնախնդիրների թվում կարելի է նշել հետևյալները.

- ՀՀ ֆինանսների նախարարության պարտքի կառավարման համապատասխան ստորաբաժանման կառուցվածքի գործառնության լրացուցիչ հստակեցման և ամբողջացման անհրաժեշտություն է զգացվում,
- արտաքին վարկային երաշխիքների նախապատրաստման ու դիտարկման գործընթացը հստակեցված չէ,
- լրջագույն խնդիրներ կան պետական պարտքի կառավարման գործառնությունների իրականացման արդյունավետության ներքին աուդիտի անցկացման հետ կապված. ըստ էության, պարտքի կառավարման համակարգի սույն բաղադրիչը գրեթե բացակայում է:

Ինչ վերաբերում է մակրոտնտեսական քաղաքականության հետ պարտքի կառավարման փոխհամաձայնեցվածությանը, ապա այս հարթությունում լրջագույն հիմնախնդիր է պարտքի սպասարկման կանխատեսումների ճշգրտության ցածր մակարդակը, ինչը մի կողմից հարկաբյուջետային քաղաքականության հիմքում դրված մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումների ցածր ճշգրտության հետևանք է, մյուս կողմից՝ իր հերթին պարտքի կայունության պարամետրերի ոչ ճշգրիտ գնահատականների պատճառով նպաստում է մակրոտնտեսական քաղաքականության ուղենիշային ցուցանիշների ոչ ճշգրիտ նպատակադրմանը:

Պարտքի կառավարման համակարգի արդյունավետության գնահատման ցուցանիշների հաջորդ ենթախումբը առնչվում է փոխառությունների և դրանց հետ կապված ֆինանսական գործունեության գնահատմանը:

Ցուցանիշների այս ենթախմբի շրջանակներում գնահատելով ՀՀ-ում պարտքի կառավարման համակարգը՝ որպես հիմնախնդիր պետք է նշել արտաքին փոխառությունների իրականացման ընթացակարգերի ոչ բավարար փաստաթղթային ապահովումը և հստակեցումը: Բացի այդ, արտաքին երաշխիքների ներգրավման ապահովագրության քաղաքականությունն ու ընթացակարգերը ևս պատշաճ փաստաթղթային ապահովվածությունից զուրկ են:

Պետական պարտքի կառավարման արդյունավետության ապահովման համատեքստում հատուկ նշանակություն ունի գործառնական ռիսկերի կառավարումը: Վերջինիս կարևոր բաղկացուցիչներից է պարտքի արդյունավետ վարչարարությունը և տվյալների անվտանգության ապահովումը:

Պարտքի կառավարման արդյունավետության գնահատման ցուցանիշների վերջին խումբը առնչվում է պարտքի պատշաճ հաշվառման և հաշվետվողականության ապահովմանը: Այս համատեքստում որպես հիմնախնդիր պետք է հիշատակել այն հանգամանքը, որ արտաքին երաշխիքների գրանցման հետ կապված առկա են որոշ թերացումներ, մասնավորապես՝ այդ գրանցումները համակարգային բնույթ չեն կրում:

Աշխատանքի այս գլխում մշակվել են պարտքի կառավարման ռազմավարական և օպերատիվ մոդելներ, որոնց շրջանակներում փորձ է արվում նկարագրել պարտքի կառավարման օպտիմալ տարբերակի ընտրության հիմնախնդիրը՝ որոշումների կայացման երկու հաջորդական մակարդակների (ռազմավարական և մարտավարական) փոխալայմանավորվածության և փոխկապվածության սկզբունքը հաշվի առնելով:

Պարտքի կառավարման օպերատիվ մոդելը նվիրված է տարբեր վարկային շուկաներում նվազագույն ծախսերով ֆինանսական միջոցների ներգրավման խնդրի լուծման ուղիների որոնմանը: Սահմանափակումների համախումբը հետևյալն է.

$$\sum_{i=1}^k a_{it} x_{it} \leq P_{ik}, \forall t \in [1, T], k \in [1, T] \text{ համար} \quad (1),$$

որտեղ՝ $A = [a_{it}]_{N \times T}$ գործառնությունների օբյեկտներում մատրիցն է, որը բաղկացած է 0 և 1 արժեքներից: Ընդ որում, եթե՝ $a_{it} = 0$, ապա i -րդ գործիքի հետ t -րդ ժամանակահատվածում գործառնությունները արգելված են (չեն իրականացվում), $a_{it} = 1$, ապա t -րդ ժամանակահատվածում հնարավոր է i -րդ գործիքի միջոցով իրականացնել ներգրավման կամ մարման գործառնություն, x_{it} -ն t -րդ ժամանակահատվածում i -րդ ֆինանսական գործիքի ներգրավման կամ մարման գումարն է, P_{ik} -ն միջոցների ներգրավման սահմանաչափն է, k -ն P_{ik} սահմանաչափի օրն է, i -ն գործիքի համարն է:

$$\sum_{i=1}^N a_{it} x_{it} = L_t, \forall t \in [1, T] \text{ համար} \quad (2),$$

որտեղ՝ L_t -ն փոխառու միջոցների ներգրավման կամ մարման մեծությունն է, N -ը՝ փոխառության գործիքների քանակն է, i -ն գործիքի համարն է,

$$D_{it} \geq 0; \forall i \in [1, N]; \forall t_0 \in [1, T] \text{ համար}, \quad (3),$$

D_{it} -ն հիմնական պարտքի գումարն է ըստ i -րդ գործիքի t -րդ ժամանակահատվածում,

$$\text{որտեղ՝ } \sum_{t=1}^{t_0} a_{it} x_{it} = D_{it}, \forall i \in [1, N]; \forall t_0 \in [1, T] \text{ համար},$$

$$\sum_{t=1}^{t_k} x_{it} = 0, \forall i \in [1, N] \text{ համար} \quad (4),$$

որտեղ՝ t_0 -ն i -րդ գործիքի օգնությամբ փոխառության սկիզբն է, իսկ t_k -ն՝ փոխառության գործողության ժամկետի ավարտը, առանց երկարացման հնարավորությունը հաշվի առնելու, T -ն ֆինանսական ժամանակահատվածների քանակն է, N -ը՝ փոխառության գործիքների քանակը: (1)-(4) սահմանափակումների համախումբը կանվանենք մոդել:

Ինչ վերաբերում է մոդելի նպատակային ֆունկցիային, ապա առաջարկվում են հետևյալ երեք տարբերակները.

I. Պարտքի սպասարկման ծախսերի մինիմիզացման նպատակային ֆունկցիա.

$$S(x) = \sum_{t=1}^T \sum_{i=1}^N S_{it} D_{it} \rightarrow \min \quad (5),$$

որտեղ՝ D_{it} -ն պարտքի մեծությունն է՝ ըստ i -րդ գործիքի, t -րդ ժամանակահատվածում, S_{it} -ն փոխառության մեկ միավորի արժեքը,

II. Ռիսկերի մակարդակի հաշվառման կամ տվյալ ֆինանսական գործիքի նախընտրելիության վրա հիմնվող նպատակային ֆունկցիա.

$$R(x) = \sum_{t=1}^T \sum_{i=1}^N v_{it} D_{it} \rightarrow \min \quad (6),$$

որտեղ $v_{it} \in [0;1]$, v_{it} -ն փոխառության միավորի հաշվով ռիսկի մակարդակն է:

$$Q(x) = \sum_{t=1}^T \sum_{i=1}^N g_{it} D_{it} \rightarrow \max \quad (7),$$

որտեղ $g_{it} \in [0;1]$, g_{it} -ն՝ նախընտրելիության ֆունկցիան է:

III. Խառը տարբերակ

$$f(x) = \sum_{t=1}^T \sum_{i=1}^N v_{it} s_{it} D_{it} \rightarrow \min \quad (8):$$

Պետական պարտքի ռազմավարական կառավարման մոդելը կառուցված է պետական պարտքի ռազմավարական կառավարման գերակայություններին և յուրահատկություններին ներդրումային նախագծերի հիմնավորման դինամիկ մեթոդների հարմարեցման հիմքի վրա: Ի սկզբանե հարկ է հստակեցնել, որ օպերատիվ մոդելից ռազմավարական մոդելի հիմնական տարբերությունը ներգրավվող փոխառությունների օգտագործման ուղղությունների մեջ է: Ըստ այդմ՝ պետական պարտքի կառավարման ռազմավարական մոդելի շրջանակներում ենթադրվում է, որ փոխառու միջոցների ներգրավման գլխավոր

նպատակը պետական նշանակություն ունեցող և երկրի սոցիալ-տնտեսական կայուն զարգացման գերակայություններից բխող ներդրումային նախագծերի (և առաջին հերթին՝ ենթակառուցվածքային բնույթ ունեցող) իրականացման ֆինանսավորումն է:

Այսպիսով՝ ռազմավարական մոդելի շրջանակներում սահմանվում են հետևյալ նպատակները. պարտքի սպասարկման ծախսերի նվազագույն մակարդակի ապահովում, բյուջեի եկամուտների առավելագույն մակարդակի ապահովում, ներդրումային նախագծերի առավելագույն ծավալի իրականացում, t' ժամանակահատվածում բյուջետային պակասուրդի կամ հավելուրդի որոշակի պլանային $L_{t'}$ մակարդակի ապահովում:

Ընդհանուր առմամբ, խնդիրը կարելի է մեկնաբանել որպես բյուջեի ֆինանսավորման հնարավորությունների սահմաններում տեղավորվող ներդրումային տարբեր ծրագրերի համախմբության ընտրություն:

Արդյունքում՝ ներկայացվող մոդելում նպատակային ֆունկցիան կունենա հետևյալ սահմանափակումները.

$$0 \leq X_g \leq 1, \quad g \in [1; E] \quad (9),$$

որտեղ՝ X_g -ն ամբողջ թիվ է, եթե $X_g = 0$, ապա g ներդրումային նախագիծը բյուջեի պլանային ցուցանիշները կազմելիս չի օգտագործվում, $X_g = 1$, ապա g ներդրումային նախագիծը բյուջեի պլանային ցուցանիշները կազմելիս օգտագործվում է, E -ն ներդրումային նախագծերի քանակն է՝ դիտարկվող T' ժամանակահատվածների ընթացքում:

$$L_{t'} \geq \min L_{t'} \quad (10),$$

որտեղ՝ $\min L_{t'}$ -ն պետական պարտքի սահմանային մեծությունն է t' -րդ ժամանակահատվածում,

$$R_{DT'} \geq \sum_{t'=1}^{T'} L_{t'-1} (1 + S_{t'}) \quad (11),$$

որտեղ՝ R_{DT} -ն պլանային T' ժամանակաշրջանի ընթացքում պարտքի սպասարկման ծախսերի հանրագումարն է, $S_{t'}$ -ն t' -րդ ժամանակահատվածում փոխառության միջին գինը, T' -ն բյուջեի ձևավորման պլանային ժամանակաշրջանը:

Սողեղի նպատակային ֆունկցիան կլինի՝

$$L_{t'} = M_{t'} - R_{t'} + \sum_{g=1}^E Z_{t',g} x_g + L_{t'-1} (1 + S_{t'}) \rightarrow \max \quad (12),$$

որտեղ՝ $M_{t'}$ -ն բյուջեի եկամուտներն են t ժամանակահատվածում, $R_{t'}$ -ն բյուջեի ծախսերը t ժամանակահատվածում, $Z_{t',g}$ -ն դրամական հոսքերն ըստ ներդրումային նախագծերի $L_{t'}$ -ն t' -րդ ժամանակահատվածում բյուջեի պակասորդը կամ հավելուրդը:

Պետական պարտքի կառավարման խնդիրների լուծման գործընթացում դիտարկված երկու մոդելների օգտագործման հիմնական սկզբունքը դրանց փոխլրացումն է:

ՀՀ պետական պարտքի կառավարման ռազմավարական և օպերատիվ մոդելների օգտագործման արդյունքը պլանավորման յուրաքանչյուր ժամանակահատվածի համար որոշված փոխառության ֆինանսական գործիքների հավաքածուն է: Սողեղների գործարկման շրջանակներում ստացված լուծումների հիման վրա կարելի է սահմանել այն պայմանները, որոնցից ելնելով՝ անհրաժեշտ է ձևավորել կոնկրետ փոխառության պայմանագրերը:

Աշխատանքի եզրակացություններ բաժնում, հիմնվելով կատարված ուսումնասիրությունների և վերլուծության արդյունքների վրա, ամփոփ ձևով ներկայացվել են հիմնական եզրակացությունները.

1. Պետական պարտքի ու դրա առանձին բաղադրիչների բացարձակ և կառուցվածքային մակարդակները բնութագրող ցուցանիշների և տնտեսության զարգացման հիմնական բնութագրիչ հանդիսացող ՀՆԱ մակարդակի ու դրա աճի տեմպի միջև գոյություն ունեցող ռեգրեսիոն կապի բացահայտման ու

գնահատման նպատակով աշխատանքում իրականացված ռեգրեսիոն վերլուծության արդյունքներից բխում են հետևյալ եզրահանգումները.

- ՀՆԱ և պետական պարտքի մեծության միջև գոյություն ունի դրական կապ,

- դրական կապ է առկա նաև ՀՆԱ և արտաքին պետական պարտքի միջև,

- ՀՆԱ և միջազգային կազմակերպություններից ստացվող վարկերի ու փոխառությունների ծավալի միջև գոյություն ունի դրական կապ, ընդ որում՝ ռեգրեսիայի գործակիցը ավելի բարձր է, քան արտաքին պարտքի ընդհանուր մեծության դեպքում,

- արտաքին պարտքի սպասարկման բեռի ավելացումը բացասաբար է անդրադարձել ՀՆԱ մակարդակի վրա,

- ներքին և արտաքին պետական պարտքի մեծությունների հարաբերակցության փոփոխության և ՀՆԱ մակարդակի միջև գոյություն ունի դրական կապ, ռեգրեսիոն կապի նույն ուղղվածությունն է դիտվել ՀՆԱ և պետական պարտատոմսերի ծավալի միջև,

- պետական պարտատոմսերի ժամկետայնության աճը եղել է ՀՆԱ ընդլայնման գործոն (ռեգրեսիայի գործակիցը կազմում է 1.78), իսկ եկամտաբերության աճը որոշակիորեն զսպում է ՀՆԱ ավելացումը (ռեգրեսիայի գործակիցը՝ -50.2), այսինքն՝ պետական պարտատոմսերի եկամտաբերության 1 տոկոսային կետով աճի՝ ՀՆԱ-ի վրա զսպող ազդեցությունը չեզոքացնելու համար անհրաժեշտ կլինի 28.2 օրով ավելացնել պետական պարտատոմսերի ժամկետայնությունը,

- ներքին պետական պարտքի տոկոսավճարներ/պետական բյուջեի եկամուտներ հարաբերակցության և ՀՆԱ մակարդակի միջև գոյություն ունի բացասական ռեգրեսիոն կապ,

- արտաքին պարտքի՝ ըստ վարկատուների և ըստ արտոնյալության մակարդակի հարաբերական տեղաշարժերը, որոնք արձանագրվել են 1998-2013թթ., բացասական ազդեցություն են ունեցել ՀՆԱ աճի վրա, ընդ որում՝ երկրորդ ցուցանիշի ազդեցությունը համեմատաբար ավելի նշանակալի է եղել:

2. Համաշխարհային բանկի կողմից մշակված Պարտքի կառավարման գնահատման ցուցանիշների համակարգի կիրառմամբ բացահայտվել են ՀՀ պետական պարտքի կառավարման արդյունավետության բարձրացման առանցքային հիմնախնդիրները, որոնցից հատկանշական են հետևյալները.

- պարտքի կառավարման օրենսդրությունում լրացուցիչ հստակեցման կարիք ունի առևտրային հիմունքներով փոխառությունների իրականացման, ներառյալ՝ Եվրոպարտատոմսերի թողարկման ու տեղաբաշխման ընթացակարգը, այսպես կոչված՝ Ֆառևտրային՝ վարկատուների հետ փոխառության հարաբերությունների կազմակերպումը,

- արտաքին վարկային երաշխիքների նախապատրաստման ու դիտարկման գործընթացը հստակեցված չէ, իսկ գրանցումները համակարգային բնույթ չեն կրում,

- լրջագույն խնդիրներ կան պետական պարտքի կառավարման գործառնությունների իրականացման արդյունավետության ներքին առդիտի անցկացման հետ կապված. ըստ էության, պարտքի կառավարման համակարգի սույն բաղադրիչը գրեթե բացակայում է,

- պարտքի սպասարկման կանխատեսումների ճշգրտության ցածր մակարդակը, ինչը, մի կողմից հարկաբյուջետային քաղաքականության հիմքում դրված մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումների ցածր ճշգրտության հետևանք է, մյուս կողմից՝ իր հերթին պարտքի կայունության պարամետրերի ոչ ճշգրիտ գնահատականների պատճառով նպաստում է մակրոտնտեսական քաղաքականության ուղենիշային ցուցանիշների ոչ ճշգրիտ նպատակադրմանը,

- արտաքին փոխառությունների իրականացման ընթացակարգերի ոչ բավարար փաստաթղթային ապահովումը և հստակեցումը: Բացի այդ, արտաքին երաշխիքների ներգրավման ապահովագրության քաղաքականությունն ու ընթացակարգերը ևս պատշաճ փաստաթղթային ապահովվածությունից զուրկ են,

3. Աշխատանքում ներկայացվել է պետական պարտքի կառավարման արդյունավետության ապահովման ընթացակարգ, որը հիմնած է պետական

պարտքի կառավարման ռազմավարական և օպերատիվ մակարդակների մոդելների օգտագործման վրա:

- Պարտքի կառավարման ռազմավարական մակարդակի մոդելը նախատեսված է մի քանի ֆինանսական ժամանակահատվածների համար բյուջեի ձևավորման խոշորամասշտաբ պլանների կառուցման համար, յուրաքանչյուր պլանի համար իր բյուջետային բնութագրիչների սահմանմամբ, ինչպես նաև՝ բյուջեի կատարման տվյալ տարբերակի իրականացման համար անհրաժեշտ ներդրումային նախագծերի որոշակի փաթեթի ձևավորմամբ:

- Առաջարկվող պետական պարտքի կառավարման մոդելավորման երկաստիճան մոտեցումը պարտքի կառավարման գործընթացի համար ապահովում է դրա տրամաբանական ամբողջականությունը՝ սկզբում տեղի է ունենում ռազմավարության ընտրությունը, այնուհետև՝ ռազմավարության իրականացման գործընթացում կայացվում են մարտավարական որոշումներ: Պետական պարտքի կառավարման արդյունավետության բարձրացման և այդ ոլորտում առկա մի առանձին խումբ հիմնահարցերի լուծման անհրաժեշտությունը պայմանավորում են պարտքի կառավարման ռազմավարական և մարտավարական մակարդակներում առկա խնդիրների տարանջատման, դրանց լուծման օպտիմալ ուղիների նախանշման ու ստացված արդյունքների, ըստ դիտարկվող մակարդակի, փոխկապակցման և փոխհամաձայնեցման կարևորությունը: Այս հանգամանքը պայմանավորում է ներկայացված մոդելային կառուցվածքի և դրա գործադրմամբ պետական պարտքի կառավարման առաջարկվող մեխանիզմի գործնական նշանակությունն ու արդիականությունը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ գիտական հրապարակումներում՝

1. Գալոյան Լ., §22-ում տնտեսական աճի վրա պետական պարտքի ազդեցության գնահատման ռեգրեսիոն վերլուծությունը!, Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա, N 3(165), Երևան, մարտ 2014թ., էջ 5-8,

2. Գալոյան Լ., §Պետական պարտքի կառավարման կատարելագործման հիմնախնդիրները ՀՀ-ում, Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա, N 3(165), Երևան, մարտ 2014թ., էջ 2-5,

3. Գալոյան Լ., §Պետական պարտքի օպտիմալ կառավարումը պարտքի օպերատիվ և ռազմավարական կառավարման մոդելների հիման վրա, §Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, գիտական հոդվածների ժողովածու-2014, գիրք 1, Երևան 2014թ., էջ 61-65,

4. Գալոյան Լ., §Պետական պարտքի կառավարման միջազգային փորձի վերլուծությունը, §ՀՀ տնտեսության ինստիտուցիոնալ համակարգի զարգացման միտումները, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղ, հանրապետական գիտաժողովի նյութեր, 2008թ., էջ 144-153,

5. Գալոյան Լ., §ՀՀ արտաքին պետական պարտքի փոփոխության միտումների գնահատումը 2003-2005թթ.՝, §Տնտեսական վերափոխումների արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները ՀՀ-ում, Կառավարման և տնտեսական բարեփոխումների ինստիտուտ, գիտաժողովի նյութեր, Երևան 2006, էջ356-361,

6. Գալոյան Լ., §ՀՀ արտաքին պետական պարտքի փոփոխության միտումների գնահատումը 2000-2002թթ.՝, §Տնտեսական վերափոխումների արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները ՀՀ-ում, Կառավարման և տնտեսական բարեփոխումների ինստիտուտ, գիտաժողովի նյութեր, Երևան 2006, էջ 351-356,

7. Գալոյան Լ., §Պետական պարտքի գնահատման մեթոդաբանությունը, §Սոցիալ-տնտեսական վերափոխումները և զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում, Կառավարման և տնտեսական բարեփոխումների ինստիտուտ, գիտաժողովի նյութեր, Երևան 2005թ., էջ 180-184:

ГАЛОЯН ЛУСЯ ХАЧАТУРОВНА
ПРОБЛЕМЫ УСОВЕРШЕНСТВОВАНИЯ УПРАВЛЕНИЯ
ГОСУДАРСТВЕННЫМ ДОЛГОМ В РА

Диссертация на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02-“Экономика и управление хозяйством и его секторами”.

Защита диссертации состоится 28-го ноября 2014г. в 13:30 часов, на заседании специализированного совета по экономике 015 ВАК РА, действующего в Ереванском государственном университете по адресу г. Ереван, 0009, ул. Абовяна 52.

РЕЗЮМЕ

Проблемы управления государственным долгом приобрели особую остроту и важность в период мирового финансово-экономического кризиса, когда политика управления государственным долгом в отдельных странах поставила эти страны перед реальной угрозой развала финансовой системы и государственного дефолта. Эффективное управление государственным долгом является одной из актуальнейших проблем и для республики Армения. В этой связи, для дальнейшего развития финансово-экономической системы республики, особую значимость приобретает раскрытие и использование потенциальных возможностей повышения эффективности управления государственным долгом, совершенствование системы управления долгом, оптимизация пакеты долговых обязательств и пр.

Представленная диссертация посвящена всестороннему изучению указанных выше проблем, раскрытию путей их решения, чем и обусловлена актуальность и злободневность темы исследования. Основная цель диссертации – выявление проблем управления государственным долгом в РА на основе изучения результатов лучшего международного опыта в области управления государственным долгом, их разностороннее изучение, а также разработка и представление теоретико-методологических и научно-практических подходов к повышению эффективности управления государственным долгом.

Для реализации указанной цели в работе были поставлены и решены следующие задачи: - разносторонне изучить сущность, основные характеристики управления государственным долгом, его место и роль в системе

макроэкономической политики, анализировать лучший международный опыт в области управления государственным долгом; - анализировать особенности государственного долга РА и поведения его основных показателей за последние полтора десятилетия; - оценить воздействие государственного долга и его отдельных составляющих на темпы экономического роста в республике; - изучить институциональную среду управления государственным долгом в РА; - анализировать среднесрочные цели управления государственным долгом в РА и связанные с их реализацией финансово-экономические риски; - выявить проблемы совершенствования процесса управления государственным долгом в РА; - разработать процедуру оптимального управления государственным долгом.

Полученные результаты имеют теоретико-методологическое и прикладное значение, научная новизна которых состоит в следующем: 1. Была проанализирована и обоснована регрессионная связь между показателями, характеризующими абсолютный и структурный уровни государственного долга и его отдельных составляющих и уровнем ВВП и темпом его роста в 1997-2013гг. 2. С применением методологии, разработанной Всемирным банком, была проведена оценка эффективности системы управления государственным долгом в РА, были выявлены существующие проблемы и были представлены предложения по их решению, которые в основном относятся к совершенствованию институциональной сферы управления государственным долгом, повышению эффективности разработки стратегии управления долгом, эффективному управлению оперативными рисками и т.д. 3. Были разработаны стратегические и оперативные модели управления государственным долгом, в рамках которых были выявлены и обоснованы проблемы выбора оптимального варианта управления государственным долгом. Результатом применения этих моделей является собрание финансовых инструментов, определенных для любого отрезка времени. На основании полученных решений были установлены те условия, исходя из которых необходимо сформировать договоры конкретных займов.

LUSYA GALOYAN KHACHATUR
THE PROBLEMS OF THE IMPROVEMENT OF THE PUBLIC DEBT
MANAGEMENT IN RA

The abstract of the dissertation for the pursuing degree of PhD of Economics in the field 08.00.02- “Economy, Management of Economics and its Sectors”.

The defense of the dissertation will take place at 13:30 on November 28, 2014 at the Meeting of Specialized Council 015 of Economics of the Supreme Certifying Committee of the Republic of Armenia acting at the Yerevan State University. Address: 52 Abovyan Street, Yerevan, 0009.

Abstract

The issues of the management of the public debt have become more essential during the global financial-economic crises for 2007-2008, when the policy of the public debt management in different countries encountered the real risk of the disorganization of the financial system and the default of the country. The effective management of the public debt is also on the agenda of the Republic of Armenia. From this perspective, for the further development of the financial-economic system of the country it is essential to discover and use the potential opportunities to increase the effectiveness of the public debt management, improve the public management system, optimize the package of the debt liabilities, etc. The thesis is dedicated to research the above-mentioned problemscomprehensively, point the ways of their solution that define the modernity and necessity of the research.

The main objective of the thesis is to reveal the issues of the public debt management, their comprehensive study, develop and represent thetheoretical-methodological and empiric approaches of the increase of the efficiency of the public debt management based on the research of the results of the best international experiencein the public debt management sector.

Based on the objective following issues have been formulated and solved in the thesis:

- to research the public debt management, main descriptives, its role in the system of the macroeconomic policy comprehensively,
- to analyze the public debt of the Republic of Armenia and the features of the behavior of its main descriptivesduring the last one and a half decade,

- to assess the influence of the public debt and its ingredients on the pace of the economic growth,
- to analyze the middle-term objectives of the public debt management in RA and the financial-economic risks of their implementation,
- to outline the challenges of the improvement of the public debt management in RA,
- to develop the procedure of the optimal management of the public debt.

The results in the thesis have theoretical-methodological and practical importance and scientific novelty is that:

- ✓ Analyze the regression between the indicators describing the absolute and structural levels of the public debt, its ingredients and the GDP, its growth for 1997-2013,
- ✓ Using the methodology developed by the World Bank, we implemented the assessment of the effectiveness of the management system of the public debt in RA, discovered the main issues and represented the suggestions for their solutions regarding the enhancement of the institutional environment of the public debt management, the increase of the efficiency of the development of the debt management strategy, the effective management of the operative risks, etc.
- ✓ We developed the strategic and tactical models of the public debt management, discovered and reason the problem of choosing the optimal option of the public debt management. The usage of these models results in the collection of the financial implements of the loans for each planned period. Considering the solutions we represented the conditions based on which we define the necessity of the formulation of definite loan contracts.